Հայաստանի ամերիկյան համալսարանի
Հատուկ դասընթացների բաժինը

հրավիրում է

«Անցման շրջանի տնտեսություններ»

թեմայով դասընթացին

Այս դասընթացը կներկայացնի կենտրոնացված պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության անցնող երկրների մակրոտնտեսական և միկրոտնտեսական գործընթացները: Դասընթացի առաջին մասում հիմնականում կքննարկվեն մակրոտնտեսական միջավայրը և կայունացման քաղաքականությունը: Իսկ երկրորդ մասում ուշադրությունը կկենտրոնացվի հետագա աճին նպաստող հատվածային և կառուցվածքային միկրոտնտեսական քաղաքականության վրա: Դասընթացում կներկայացվեն հետևյալ թեմաները՝ ուշադրություն առնելով Հայաստանում անցումային գործընթացի հատուկ դեպքը.

- Արդյոք գոյություն ունի՞ անցման շրջանի տնտեսությունների տեսություն
- Կենտրոնացված պլանավորման փլուզման պատճառները
- Անցման շրջանում արտադրողականության և արտադրության անկումը
- Գնաճի հսկումը և կայունացումը
- Փողի և փոխարժեքի քաղաքականություն
- Դրամավարկային քաղաքականություն
- Եկամուտների բաշխումը և սոցիալական ապահովության ցանցը
- Առևտրի քաղաքականությունը և ձեռնարկությունների վերակազմումը
- Բանկային հատված և դրամավարկային բարեփոխումներ
- Սեփականաշնորհում
- Աշխատանքի շուկան և զբաղվածության հիմնախնդիրները
- Հայաստանի անցման գործընթացի հետագա ուղղությունները

Դասընթացն օգտակար կլինի կառավարական հաստատությունների և բանկերի աշխատողներին, ինչպես նաև հարակից մասնագիտությունների ուսանողներին:

- *Դասընթացը կվարի Հայաստանում Միջազգային արժութային հիմնադրամի մշտական ներկայացուցիչ և Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) դասախոս Սյուզան Ջոնսը:*
- *Սկիզբը՝ ս.թ. ապրիլի 29-ին, տևողությունը՝ 6 շաբաթ:*
- *Օրերը՝ երկուշաբթի և չորեքշաբթի, ժամը՝ 18:30-ից մինչև 20:30:*
- *Պարապմունքները կընթանան անգլերեն լեզվով՝ միաժամանակյա հայերեն թարգմանությամբ:*
- *Գրանցումը և վճարումը տեղի կունենան ՀԱՀ-ի 19ա սենյակում մինչև ապրիլի 25-ը:*
- *Դասընթացին կարող են մասնակցել <u>միայն առաջին 30 գրանցվածները:</u>*
- *Վարձը՝ 45 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 27-16-58